



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1212

157

U-27

1903

2010

6 200 W

Գ. ՄԱՆՏԵԿԱՅՅԱ

ՄԻՐՈՅ ՄԵՉ ՔԵՐՈՉ

157
Մ. 27

ԱՂԵՔԱՆԳՐԱԳՈՒ
ԳՏԱՐԱՆԻ ՅՈՒԹ. ԱՓԻՆԵԱՆԻ
1903
(12)

157
Մ-27

Գ. ՄԱՆՏԵԳԱՅԱ

297

ՄԻՐՈՅ ՄԵՂԲԵՐԸ

և լ

ՆՈՅԱ ԾԱԳՈՒՄԸ

ՀՈԴԵՐԱՆԵՎԸՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹՅՈՒՆ

Քարգիլ.

Երևանի քահ. Նալբանդյան

3969
4008
35975

ԱՂԷՔՄԱՆԳՐԱԳՕԼ

Ազգախիչ-սպարան Յովհ. Ափինևանի

1903

(12)



ՀԿԹԳԱԽ

Дозв. ценз. 31-го Июля 1903 г. гор. Тифлиса.

20617-60

Ս Ի Ր Ո Յ Մ Ե Ղ Ք Ե Ր Ը

և

Ն Ո Ց Ա Ծ Ա Գ Ո Ւ Մ Ը

Հ Ո Գ Ե Բ Ե Ն Ը Կ Ը Ն Հ Ե Տ Ը Չ Օ Տ Ո Ւ Թ Ի Ն

Ի

Եթէ մարդն էլ լինէր մի տեսակ արտուտ, ծիտ կամ քրաղաղ, նա էլ սիրոյ պահանջներին բաւարարութիւն կտար նախնական, կոպիտ ձևով:

Բայց թէև մարդն էլ արտուտին, ծտին և քրաղաղին համահաւասար պատկանում է կենդանական թագաւորութեանը, այնուամենայնիւ նա թագաւորն է բոլոր արարածների, նա աւելի խելացի և կրթւած է դոցա բոլորից: Մեծ ինքնավստահութեամբ և գոռոզութեամբ պնդում է նա զեռ այն էլ, որ նա-թագաւոր է ամբողջ ախեղերի:

Նորա այդ բոլոր առաւելութիւններից ուրիշ շատ հետեանքների հետ միասին, դուրս է գալիս և այն, որ մարդու համար սէրը չի կա-

բոյ լինել ցանկութիւնների հասարակ բաւարարութիւն: Սէրը նորա համար այն զօրեղ կրքերից մէկն է, որը անսահման բարդուում, խճճուում է բարոյականութեան, կրօնի և օրէնսդրութեան հարցերով և պահանջներով: Սիրոյն յատուկ են և մեղքերը և պատիժները: Նա չըջապատուած է բազմաթիւ ամենատեսակ փշերով և դրեթէ ծակոտող տատակի ամբողջ անտառով. այդտեղ, բացի դրանից, վիստում են և օձերը, որոնք ընդունակ են մահացնել իրենց խայթոցներով:

Թէ արտուտները թէ ծաերը և թէ արագողները սիրում են*) ուրախ և բաց, ամենեին շամաշելով, արեգակի պայծառ լոյսի տակ, առանց որևէ դրադաւոր թղթի և հանդիսաւոր հարսանեկան հրաւէրների . . .

Իսկ մենք չենք համարձակուում սիրոյ հակացք քցել պատշգամբում երեցած աղջկան, չենք համարձակուում սեղմել կնոջ ձեռքը, որովհետև հէնց իսկոյն աջ կողմից մեր կողքին յայտնուում է աներևոյթ գարբ ի ն ե ր ը**), որը սկսում է շշնջալ մեր ականջին. «Պարոն, գզուշաղէք, միք մոռանայ, որ այստեղ չպէտք է

*) Սիրելի խօսքը Ձերակի բարբառում գործ է ածուում սիրոյ պահանջներին յագուրդ տալու մտքով:

**) Գաւարիներ-Ձիւտը գինուր, կարարին հրօցանով գինւած:

ստնակոխ անէք այս ինչ իրաւունքը»: Իսկ ձախից նոյնպէս անտեսանելի կանգնած է պտորաստ միւս գարարիները և փոխում է. «Պարոն, միք մոռանայ, որ այստեղ անհրաժեշտ է կատարել այս ինչ պարտքը, այն ինչ պարտականութիւնը»: Եւ իսկպէս, ս'ըքան պարտքեր, ս'ըքան պարտականութիւններ կատարում են մեր այնքան բարդ հասարակութեան մէջ գարարիներների խիստ օգտակար դերը: Եւ իրաւի, գարարիները խիստ օգտակար են, որովհետև նորա պահպանում են հասարակական կարգը, պաշտպանում են ընտանիքի պատիւը, բարքերի մաքրութիւնը և խիստ բազմաթիւ շատ ուրիշ բաներ, որոնք թանգ և սուրբ են մարդկութեան համար: Բայց դորա հետ միասին նորա են թունաւորում մեր սիրոյ հըրճաւորները, 'իհարկէ միայն այն պատճառով, որ ազատեն մեզ աւելի մեծ շարիքից. ճիշտ այնպէս, ինչպէս պարբերաբար և յաջորդաբար սրբուկում են մի որևէ յատուկ թոյն, պաշտպանելու համար, օրինակ դիֆտերիաի վարակումից:

Եթէ մենք շատ մօտ ենք գնում փարթամ ծաղկոցին և վերնազգիստով թեթե քսում ենք մի որևէ ծաղկի ցօղունին, անմիջապէս լուում է վախեցած բացականչութիւնը. «Ջգոյ՛՛, կջարդէք այդ գարդ ե ն ի ա ն»*):

*) Գարդենիայ-հնդկական մի բոյս գեղեցիկ սպիտակ և հոտաւետ տերևներով:

Թէ որ մենք ցանկանանք քաղել մի ծաղիկ, թէկուզ թուփը զարդարող հարիւրից մէկը, «Աստուած մի արասցէ, այդ ծաղիկները նշանակած են սերմացուի համար»: Մտադրուում էք հանգստանալ հովանոցում և մէջքով թիւնգ էք տալիս նրա կանաչպատտ կողքին. ս'հ, որքան վնաս աւելք դուք այդ մի ակնթարթում: Ձեզ հետեող պարտիզպանը, ծանր հառաչանքով, խկոյն ցոյց է տալիս ձեր ամբողջ յանցանքը, ստիպում է ձեզ ձեռքով շոշափել ձեր տրորած տերևները, ջարդոտած ճուղքերը, և դուք հարիւր անգամ զղջում էք, որ ձեր խելքին փշեց այդ այգին մտնել: Եւ մենք շատ աւելի մեղքեր կարող ենք գործել իւրարանչիւր քայլափոխում, դրօսներով սիրոյ պարտիզում, այնտեղից մի քանի ծաղիկներ քաղելու համար: Իսկ որքան գեղեցիկ բաներ կան այդ պարտէզներում: Ել ինչն է ստեղծել Արարիչը այդ բոլոր հրաշալի վարդերը, եթէ մեզ թոյլ չի տրուում քաղել նոցա:

Որքան իրաւունքներ, որոնք կարող են ունակոխ լինել, որքան պարտականութիւններ, որոնք պէտք է կատարելին: Եւ մեզ թոյլ չի տրուում ծուել ճանապարհից, մենք իրաւունք չունենք գուրսգալու մեծ ճանապարհից, դէպի շաւիղը ծուելու համար, իրաւունք չունենք արհամարհել փարթամ ծաղիկները, անտառը մտնելու համար:

Ամեն տեղ և ամեն ժամանակ-պահպան գարարիները:

—Ունիք դուք մուտքի տոմսակ:

—Ունիմ, ահաւտոիկ:

—Չատ լաւ, —բայց և այնպէս սորա վերայ չկայ վերատեսչի ստորագրութիւնը, իսկ այստեղ պակասում է դրոշմանիշը:

—Լաւ, ևս կգամ մի այլ անգամ:

Եւ դուք յետ էք դառնում ճանապարհից:

Քայց այստեղ էլ ձեր առաջ, կարծես զետնից, բուսնում է մի նոր գարարիներ:

—Պարոն, այդ ի՞նչ օրի են ձեր կոշիկները. նորա ամբողջովին արիւնաթաթախ են: Ես ձեզ կալանաւորում եմ: Դուք, հաւանականարար, ոտնակոխ էք արել երրորդ անձի իրաւունքը:

Ա՛խ, այդ երրորդ անձնաւորութիւնները, որոնք սիրոյ մէջ միշտ, բազդաւորների խաղաղութիւնը մուսյոյղ տարր են կազմում: Եւ որքան բազմաթիւ են դոքա, ամբողջ հարիւրներով, հազարներով:

Ընդհանուր թւով այդ երրորդ անձնաւորութիւնները կազմում են ոչ պակաս ամբողջ գիւղից, ամբողջ քաղաքից, ամբողջ մարդկային ցեղից, որոնց դուք միշտ կարող էք վիրաւորել կամ արդէն վիրաւորել էք, քայլ անելով ճանապարհից դուրս, որը նախագծւած է օրինագրքով և մեծ ամասնութեան համաձայնութեամբ:

Քանի որ գործը դրւած է այնպէս, ինչպէս այդ իրականապէս կայ մեր արդի հասարակութեան մէջ, ես շատ լաւ են հասկանում, թէ ինչն է մե-

գանից մի քանիսները աւելի զերազատում են ամենեին շյաճախել այդ պարտէզները, տարփոտ մոլեռանդ—պարտիզպանների ընկերակցութեամբ, և անձնատուր շլինել սիրոյն, այդքան նշանաւոր թւով գարարիններնրի մէջ: Բայց այդպիսիները մնում են միշտ աննշան փոքրամասնութեան մէջ:

2ի կարելի ապրել սիրույ բուրբողին հրաժարւած: Հէնց այդ է պատճառն այն անդադար և յաւիտենական կուրի, որը տեղի է ունենում ազատ սիրել ցանկացող մարդկանց և գարարիներնրի մէջ. և այդ գարարիններնրն էն այն փրատունքները և պարտականութիւնները, որոնք և ցերեկով և գիշերով հսկում են, միշտ կանգնած իրենց դիրքում, սաից մինչև գլուխը զինւած, պաշտպանելու համար մեր ցոյց տւած բոլոր բարոյական գանձերը:

Մի կողմից շի եղել երբէք աւելի արթուն, գործունեայ և աներկիւղ սասիկանութիւն, ինչպէս այդ գարարիններնրն են, —միւս կողմից, շեն եղել երբէք և աւելի խորամանկ, հնարագէտ և ճարտար մեղապարտներ: Մի կողմից բազմութիւ և ծանր պատիժներ, միւսից—մեղքի անշափ քաղցրութիւն: Եւ մեղադրեալի փաստաբանները միշտ, իւրաքանչիւր դէպքում վարժել և կանգնել մեղմացնող հանգամանքներ, ցոյց տալով «անյաղթելի հրապուրանքը»: Միաժամանակ և երգեալները, իրենք էլ ստեղծւած լի-

նելով միս ու արիւնից-նոյնպէս հակումն են զգացել գործելու այդ նոյն, անշափ-քաղցր սիրոյ մեղքը:

Յատկապէս այդ կուրի մէջն է-սիրահարւածների երկարատև, յաւիտենական ամբողջ պատերազմը հասարակական օրէնքների դէմ: Այդ կուրի մէջն է-սիրոյ ամբողջ պատմութիւնը, որտեղ կան արիւնով գրւած թերթեր. քիչ չեն և այնպիսի թերթերը, որոնք արտասուքով են գրւած, պատահում են նոյնպէս և՛ տարօրինակ, և՛ ծիծաղելի թերթեր, ինչպէս ծաղրանկարների հաւաքածուն: Բարձր և ծիծաղելին, վայրենին և ծաղրալին, անգութը և հերոսականը, մի խօսքով, բոլոր տարրերը համախմբել և հիւսել են գեղեցիկ, մեղ համար թանկ սիրոյ, բնութիւնից մարդկանց նախասահմանւած այդ ստուածային պարզի շուրջը: Ո՛րքան հրճւանքներ է մարդը ողողել մաղձով. ինչպիսի սարդոստայններով են պատուում հրաշալի ծաղիկները այն դրախտի, որը Աստուած ստեղծել է և աճեցրել մեղ համար:

Քաղաքակրթութեանը, որը անարգել գնում է աւելի յառաջ ու յառաջ-մենք, նորա այլ բարերարութիւնների թւում, պարտական ենք դեռ և նրանով, որ նա ոչնչացրել է շատ ճանապարհներ, և խորտակել է սէրը փաթաթող բազմութիւ շղթաներ:

Այժմ արդէն այլևս գոյութիւն չունեն, իր-

բև ընդունեաժ պետական օրէնք, ոչ բաղմա-
կնութիւնը, ոչ բաղմայրութիւնը: Չատ տեղե-
րում ընդունեաժ է սպահարգանք: Գտնեաժ է
արդէն սճ մէկ ապահովութեան դռնակ սիրոյ
երկաթուղով ճանապարհորդող ուղևորների
կեանքի անվտանգութեան համար:

Ճշմարիտ է, գարարիներնըրը դեռ լիակատար
գրահաւորութեամբ կանգնեաժ են իրենց դիրքե-
րում, բայց նոցա սրերը պատեաններումն են,
և քիչ ժամանակ շի հարկաւոր, նոցա գուրս քա-
շելու համար: Յաճախ-մինչդեռ գարարիներ-
ները կը մերկացնեն իրենց սրերը, մեղաւորին,
օրէնքը դեղծողին, արդէն յաճողում է փախչել
և աշքից ծածկել: Ոչ սակաւ նոյնպէս և կարե-
կից գարարիները, նկատելով սիրոյ յանցանքը
գործող անձնաւորութեանը, այնպէս է ցոյց
տալիս, իրը թէ ոչինչ շի տեսնում. Ախար գա-
րարիներնըն էլ նոյն մարդիկն են: Եթէ ժա-
մանակին և բաւական առատ թէյի փող արւի
նոցա-նորա էլ կարող են, եթէ պէտք է, խուլ
և համբ դառնալ:

Բանալու գիւտը իրենից յետոյ բերեց հա-
մարանալու (отмычка) գիւտը-իսկ մեղքի
գիւտը յառաջ բերեց փաստաբաններին:

Հնդկաստանում եղաժ ժամանակ, ես յաճախ
հիւր էի գնում մի հարուստ և ուսումնական

բրահմինի*) մօտ, որը միևնոյն ժամանակ
և թագաւորական քարտուղարն էր:

Լինելով ազատամիտ, նա, այնուամենայնիւ,
ընդմիմն և դերի էր իւր դասակարգի բոլոր
անհետեթութիւններին և անմիտ նախապաշա-
րումներին: Նա օտարազգիներից ոչ մէկին ցոյց
չէր տալիս իւր կանանց, միտ չէր ուտում, իսկ
զինի խմում էր միայն թարուն, այդ նպատակով
փակելով իւր սենեակում, նախապէս ծածկե-
լով բոլոր լուսամուտները:

Երբ ես այդ առթիւ արտայայտեցի նորան
իմ գարմաքը, նա խորը հառաչեց և ասաց,
անխուսափելի ճակատագրին հպատակող, դո-
հի ձայնով:

— Այն, այն, մեր կրօնական պատէրները
այն աստիճան պահանջող են, այնքան անմիտ
են և անիրագործելի, որ բրահմինները ահամայ
մեղանշում են նրանց դէմ օրական ամենաքիչը
հարիւր անգամ:

Բայց մի կողմ թողնենք Հնդկաստանը և նո-
րա բրահմիններին և քննենք, թէ ինչպէս, ինչ
կերպով մեղանից իւրաքանչիւրը, արիական քա-
ղաքակրթութեան այդքան հուշակաւոր որդաց
մէջ, կարող է մեղադրել սիրոյ յանցանքների մէջ:

Մենք սիրոյ մէջ կարող ենք մեղաւոր լինել
կրօնի, օրէնքի, առողջապահութեան և բա-

*) Բրահմին կամ բրահման հնդկական հոգևորական
տ. Թ.

ըոյականութեան վերաբերմամբ:

Իսկ այդ շորս գլխաւոր ճանապարհները, որոնցով ընթանում են սիրոյ մեղքերը, մեզ կարող են դուրս բերել դեռ սրբան անագին թւով ուղիներ, սրբան բազմաթիւ կողմնակի շաւիղներ և ծառուղիներ:

Սիրոյ բոլոր յանցանքների և բոլոր մեծ մահացու մեղքերի ցուցակ կազմելու համար հարկաւոր էր մի մեծ հասար, որը պայծառ կերպով կապացուցանէր մեզ, որ մենք էլ, Պոռմէթէոսի գոված յեանորդներս, նոյնպէս աչքի չենք ընկնում մի առանձին խելքով, և որ մենք Ասիայի սերունդներս, կրողական քաղաքակրթութեան սիրւած բնեամբններս, կարող էինք համարձակ ձեռք տալ հնդկական Բրահմինին բրահմնեականութեան խղճագիտութեան այդ սարուկին:

Գոյութիւն ունին անագին թւով կրօնական գրադարաններ, որտեղ հետազօտում են մտքի, գործքի և զանցառութեան մեղքերը սիրոյ դէմ և խիստ բազմաթիւ ուրիշ անհամար, ինչպէս ծովի աւազը, յանցանքների տեսակները: Այդ ընդարձակ դաշտը մենք թողնում ենք ասուածաբանների և գծաբան տանջանքներին բոլոր հաւատացողների գննութեանը:

Անձնատուր չենք լինի նոյնպէս և օրինագրքերի քննութեանը, որովհետեւ մի կողմից օրէնքները շատ թէ քիչ պէտք է ծանօթ լինեն

բոլորին, և նոյնպէս այն պատճառով, որ շնայելով օրէնքի պատիժներին, որոնք սպառնում են սիրոյ յանցանքների մէջ մեղադրւածներին, այնուամենայնիւ, այդ մեղքերը գործում են ամենքը և ամեն տեղ, այն յուսով, թէ կգտնւի մի յարմար անցք, որով կարելի կլինի ջրից շոր դուրս գալ և պատժի չենթարկել: Միևնոյն ժամանակ, քաղաքակրթութեան իւրաքանչիւր քայլափոխի հետ, օրէնքը աւելի և աւելի է ընդարձակում իւր ցանցերի օղակները, և ջրնջում է իւր թերթիւից մի ամբողջ շաքր յանցանքների սիրային գործերի մէջ, որոնց համար երբեմն դատապարտւում էին մինչև անգամ մահան: Այժմ արդէն օրէնքն այլևս չի յիշատակում այդ տեսակ յանցանքները, և նա իւր հայեացքը դարձնում է դոցա վերայ միայն այն ժամանակ, երբ այդ կատարւում է բռնաբարութեամբ և կամ վիրաւորում է երբորդ անձի իրաւունքը:

Նոյնպէս չպիտի խօսենք և սիրոյ յանցանքների մասին առողջապահութեան դէմ. իսկ դուրս փոխարէն կզբաղենք բարոյականութեան դէմ գործւած սիրոյ մեղքերով: Վերջինս, անկեղծ և բարոյական մտքով բարձր գարգացման տէր հասարակութեան մէջ, պէտք է յաւաճ գնար միշտ ձեռք ձեռքի տւած օրէնսդրութեան և կրօնի հետ: Գորա փոխարէն նա, սիրոյ հարցերում, յաճախ հակասում է նորան և սկզբում է նոցա:

Այդ բարոյագիտութիւնը մասամբ զբաւոր,
մասամբ աւանդուած է սերնդէ սերունդ սովո-
րութիւնների, բարբերի և այն բոլոր բարդ գոր-
ծողութիւնների, վարմունքների և խօսքերի մի-
ջոցով, որոնք կազմում են ամբողջ հոգեկան
մթնոլորդը տրւած ազգի կամ պատմական դարի:

Այդ իսկ բարոյագիտութիւնը, որը ունի ա-
ւելի մեծ նշանակութիւն, մեծ հեղինակութիւն,
քան բոլոր գրւած օրէնքները, գծութիւն տան-
ջանքներից աւելի վախեցնող, բանտերը և կոն-
դերը, ունի իւր սեփական կանոնադրութիւնը,
և դրոշմում է անջինջ, կրակէ տառերով բոլոր
քաղաքակիրթ մարդկանց խիղճը: Հէնց այդ է
այն ուղիղ, մշտնջենաւոր բարոյականութիւնը,
որը պէտք է որ սովորեցնէր մեզ լինել ազնիւ
մարդ,-ազնիւ, ոտից մինչև գլուխը, միշտ և
ամեն տեղ:

Կանայք, որոնք սիրոյ մէջ մեղանշում են
միշտ մեզ հետ և շնորհիւ մեզ, աւելի շատ
յանցաւոր են երեւում այն պատճառով, որ յատ-
կապէս այդ բարոյականութիւնը դեռ չի հասել
իւր դարգացման բարձր աստիճանին, որ նա
գեռեւ տատանւում է կեղծութեան և կոպտու-
թեան մէջ, խճճելով ու շղթայելով մեծաուստ
ճակոտող փշերին լուծեանը, սոփեստու-
թեանը և ստութեանը:

Այդ բարոյականութիւնը-տարբեր և հակա-
սական ոյժերի հեռականքը, մի տեսակ համա-

ձայնութիւն է անհնարաւոր, անհասանելի ի-
դէալների և մեծակարող կրքերի մէջ: Դա մի
տեսակ «modus, a vivandi» է, որի շնորհիւ
սիրոյն յաջողում է պահել և պահպանել իւր
գոյութիւնը հազդին քանակութեամբ թշնամինե-
րի մէջ, որոնք աշխատում են կործանել նորան,
բաղմաթիւ նախանձողների մէջ, որոնք զբաղա-
րում են նորան: Այդ «modus vivandi» է, որի
շնորհիւ սէրը, այնուամենայնիւ, կարողանում է
աճեցնել մի քանի ծաղիկներ և մինչև անգամ
հաւարել մի քանի պտուղներ նորան շրջապա-
տող շարագուշակ, յաճախ փոփոխող երաշու-
թեան, փոթորիկների և հեղեղների մէջ:

Այդ բարոյականութիւնը կատարելութիւնից
շատ հեռու է, որովհետեւ նա ստիպւած է իւր
գոյութիւնը պահպանել բազմաթիւ արգելքնե-
րի և խառնակութիւնների մէջ, որովհետեւ նա
յաճախ, իւր փրկութեան համար ստիպւած է
ծածկել օտար անուն տակ, որովհետեւ նա-
խապաշարումները բնաջինջ անելու համար պա-
հանջում է մի զէնք, որը և հեշտ չէ գտնել և
հեշտ ու անվտանգ չէ ձեռքում բռնել: Իսկ նա-
խապաշարումները այնքան շատ են, և նորա
այնքան դիմացկուն են, աւելի դիմացկուն քան
հների սալամաճաղը րան:*)

*) Միջնադարեան հասկացողութեամբ ստլաման
գրան մի պարզ ոգի էր, որը ապրում էր կրակի մէջ:
Ն. թ.

Մարդ սպանելը հեշտ է. դորա համար բա-
ւական է արի մի հարւածը, կամ մի քանի կա-
թիլ մկնդեղ, կայծակի հարւածը կամ ատրճա-
նակի գնդակը. բայց նախապաշարմունքը, գու-
ցէ և յարասն նախապաշարմունքը մեռցնելու
համար անհրաժեշտ են շատ միացեալ սոցեր.
-գիտութեան լոյսը, ասկունութիւն, անխոնջ
մաքաւում, արիութիւն, քաջութիւն քարոզիչնե-
րի ձայնը և զրոյնների գրիչը: Իսկ ամենից աւելի և
ամենից առաջ, դորա համար պահանջուում է ժա-
մանակի ներգործութիւնը, որը նման այն բանին,
ինչպէս դանդաղ, բայց անդադար ուտող ժանդար
ոչնչացնում է այն, որի հետ չէր կարող դուրս
գալ մինչև անգամ սուր երկաթը:

Ելզ ցանկալի և գեղեցիկ գործին՝ ընաջինջ
անել նախապաշարմունքը սիրային բարոյա-
կանութեան հարցերում, կարող է նպաստել ա-
մեն մի մարդ, որը այդ նպատակի մէջ առաջ-
նորդուում է առողջ և անդրդեղի խղճով: Գոռա-
լու համար անհրաժեշտ է բարձր և ուժեղ ձայն,
իսկ եթէ առաջին աղաղակը արդէն անկեղծու-
թեամբ դուրս է թռել առողջ կրծքից, ան-
պատճառ շուտով կը գտնւին մարդիկ, որոնք կը-
ձայնակցեն այդ աղաղակին և կկազմեն բարձրա-
ձայն համերգ: Եթէ ճշմարիտ է, որ երկբովեան
խողովակները կարողացան ստիպել բերդի պա-
տերին ընկնելու, աւելի ճշմարիտ է, որ հազար
հազարաւոր մարդկանց խմբերգը ընդունակ է

ոչնչացնել նախապաշարմունքը, կարող է վերջ
տալ գոցա տիրապետութեանը և ցանկ կեան-
քում նոր քաղաքակրթութեան սերմերը:

Ջգացմունքի և մաքի բոյսը սահմաններում
անհամեմատ հեշտ է նախագծել իդէալը տե-
սականօրէն, քան անդկայնիկ նորան կեանքի
մէջ և իրականացնել գործնականապէս: Գորա-
նում մենք հեշտութեամբ կհամոզուենք, եթէ
համեմատենք սիրոյ բարոյականութեան իդէա-
լը, գործնական առողջ, միևնոյն ժամանակ և
բարձր բարոյականութեան հետ:

Ամենաբարձր կատարել սիրոյ—բարձրագոյն
աստիճանի բարոյական սիրոյ-իդէալը՝ աղամարդի
համար պիտի լինէր.— «ամբողջ կեանքում
սիրել միայն մի կնոջ, և սիրել նո-
րան մինչև նորա մահը»:

Կնոջ համար սիրոյ բարձրագոյն իդէալը պի-
տի լինէր,— «սիրել ամբողջ կեանքում
մի ազամարդի և սիրել նորան մին-
չև նորա մահը»:

Մնում է միայն մի քայլ էլ անել առաջ,
բարձրացնել այդ սիրոյ բարձր իդէալը մի քիչ
էլ բարձր, այսինքն.— սիրել սիրած կնոջը մին-
չև անգամ մեռած, և սիրել միմիայն նորան.
սիրել սիրած աղամարդին մինչև անգամ մե-
ռած և սիրել միմիայն նորան:

Սակայն ես պէտք է խոստովանեմ, որ դնե-
լով հարցը այս կերպով, հասարակ իդէալի

1008
3897
20617-60



սահմանը մտնում է արդէն գեր-իդէալակա-
նութեան սահմանի մէջ: Այդպիսի իդէալով կա-
րելի էր իհարկէ հրճել, բայց նա իսկապէս ան-
մատչելի է մարդկային բնութեանը: Աւելի լաւ է
բաւականանալ առաջին, մերցոյց տւած իդէալով,
և, թէկուզ, նոյն իսկ քիչ էլ պակաս բարձրից:
Այդ դէպքում կլինեն աւելի մեծ թւով ընտրեալ-
ներ. և եթէ նոյն իսկ այդ ընտրեալները կանգ-
նած էլ շինեն այնքան անհասանելի բարձրու-
թեան վերայ, այնուամենայնիւ մարդկութիւնը
և նորա բողոքը միայն կըշահեն գորանից:

Մենք միշտ պատրաստ ենք գերադասել աւե-
լի դիջող, աւելի մատչելի բարոյականութիւնը,
չափազանց արդէն խիստ, բարձրագոյնից,
որը շատ սահմանափակ թւով մարդիկ միայն
կարող են գործադրել: Թող մեր մէջ լինեն ա-
ւելի շատ ջենալմեններ, և միայն աննշան
թւով հերոսներ: Դա աւելի լաւ է, քան մի
քիչ աւելի նշանաւոր թւով հերոսները, իսկ բո-
լոր մնացածները—միայն մանր և անարգ մար-
դիկ լինեն:



II

Եթէ հարկաւոր լինէր բարոյական սիրոյ բո-
լոր առաքինութիւնները հաւաքել մի, գոյանից
ամենաէականի, ինչպէս բոլոր մնացածների
աղբիւրի մէջ, ևս կընտրէի անկեղծութիւնը,
որը միաժամանակ և համանիշն է հաւատար-
մութեան: Ով որ անկեղծ է—նա էլ հաւատարիմ
է. ով հաւատարիմ է, նա էլ անկեղծ է:

Առաջին, թէկուզ և ամենաանմեղ սուտը,
որը ասում է սիրող մարդը իւր կիանքի ուղեկ-
ցին, արդէն առաջին խախտումն է նոցա կրդ-
մնական պայմանադրի, կապոյտ երկնքում յայտ-
նւած փոթորիկ նախագուշակող առաջին ամպն է:

Ամենքը միշտ կրկնել են և կրկնում են այն
յայտնի խօսքը, թէ առաջին սէրը—միակ իս-
կական սէրն է. և սովորաբար աւելացնում են
դորան, իբր թէ ճշմարիտ սիրել կեանքում կա-
րելի է միայն մի անգամ: Ունենալով պերճա-
խօսութեան բաւականին պաշար, և դիմելով
մի քանի սոփեստութիւնների, դժւար չէ հա-
տատել և պաշտպանել յիշեալ պատգամը: Սա-
կայն կիանքի փորձը խիստ յաճախ է հակասում
այդ ենթադրութեանը:

Մի յայտնի հեղինակուհի հաստատում էր
(ընդհակառակը, իբր թէ վերջին սէրն է—միակ)

ճշմարիտ սէրը: Եւ հաստատում էր այդ անկեղծութեամբ, ամենեին շնկատելով, որ իւր յայտարարութեամբ սնունդ է տալիս նենգամիտ և շարժարդիանց ծաղրերին և հեղնութիւններին: Եւ իսկապէս, կարելի է հարցնել, որ սէրն արդեօք համարել վերջինը: Իսկ յանկարծ այն, որի վերայ նայում էիք իբրև վերջինի, դուրս կգայ, որ նախավերջինն էր, կամ երրորդը վերջինից և այլն:

Սովորաբար մենք յատկապէս առաջին սիրայ մէջ ենք գետեղում մեր ամբողջ կուտական կրքերի անյաղթելի ոյժը և եթէ, առհասարակ, սէրը կոյր են ներկայացնում, ապա առաջին սէրը կրկնակի կոյր է: Ահա պատճառը՝ թէ ինչո՞ւ առաջին սէրը իրա հետ բերում է այնքան հիասթափումներ. ահա թէ ինչո՞ւ այնքան ամուսնութիւններ, որոնք սիրոյ պտուղներ են, դժբաղդ են դուրս գալիս: Ախար շկայ մի այնպիսի երիտասարդ, որը 20 տարեկան հասակում կարողանար ասել իրեն, թէ լաւ գիտէ և ճանաչում է այդ քամակը և օնակը*) արարածին, այդ հրեշտակ-գիրին, որի անունը կրին է: Եւ արեդօք որ ասելիքը 15 տարեկան հասակում կարող է խոտտոյանել, որ լաւ գիտէ և ճանաչում է այդ անտանակերպ արարածը:

*) Քամակը և օնակը մի տեսակը, որը բնութանակ է, կր կամենայ, փոխել իւր կաշու գոյնը:

ծին, որի անունը տղամարդ է:

Ահա թէ ինչո՞ւ, եթէ կարելի լինէր կազմել կարճատև և դաւաճանութեամբ վերջացած սիրոյ և յարատև, պարզ և հուստարիմ սիրոյ վիճակագրութիւնը—ապա առաջինի մէջ գլխաւոր տեղը կրունէր երիտասարդների սէրը, իսկ երկրորդում—արդէն աւելի արբուն հասակի մարդկանց սէրը:

Անհրաժեշտ է, թէկուզ մի փոքր, լայն մտցնել տգիտութեան այն խաւարի մէջ, որով փաթաթուած են սիրոյն վերաբերող ամեն ինչ: Պէտք է ջահ տալ երիտասարդութեան ձեռքը, որպէս զի նորա բոցը լուսաւորէ ճանապարհը սիրոյ մութ լաբիրինթոսի մէջ, դէպի որը նա ուղղում է այնպէս անվեհեր, այնպէս հաւատով:

Հին լատինական նախահայրերը դնում էին իրենց բնակարանների մուտքի ճակատին այս բանաստեղծական խօսքերը «Cave canem» (ճանաչիր քեզ): Եւ կցանկայի, որ անփորձ երիտասարդներն էլ իրենց սիրոյ ապաստարանների մուտքի ճակատին կարգային բոցատուկերով գրած այս խօսքերը. «Cave amorem» (ճանաչիր սէրը):

Եթէ ձեր ձեռները հանդիպել են քնքոյ տեղմուծի մէջ և շրթունքները միտադուկ են համայրով—ամենից առաջ և ամենից շատ եղէք անկեղծ մէկը միւսի հետ: Զգալով, որ դուք արեւադարձային երկրից փոքր առ փոքր իջնում

էք աւելի բարեխառն աշխարհ, ասացէք հնչ
խոյն այդ մասին ձեր բարեկամութեան, կամ
ձեր սիրոյ ընկերին:

Եւ եթէ դուք երբեքցէ կնկատէք, որ բոցը
ձեր սրտում սկսում է տեղի տալ ցրտին, կամ
թէ որ արեգակնային ճաճանչները և եղեմա-
կան շողերի շրջանից դուք դուրս էք եկել յան-
կարձ հարթութեան վերայ, գնում էք ամենա-
սովորական ճանապարհով, կամ մի որևէ հո-
վատուն սուէրում—խոյնեկթ շտապեցէք յայտ-
նել բոլորը ձեր սիրոյ ուղեկցին կամ ուղեկցուհուն:

Միք աշխատի, խղճալու զգացմունքից զբըզ-
լած, բենգալեան կրակներ վառել, որոնցով
դուք աշխատում էք փոխարինել նախկին արե-
գակնային ճաճանչները, նախկին արեկի փայլը:
Միք սկսի վառարան վառել այնտեղ, որտեղ
առաջ բացավառում էր հրաբուխը: Ո՛չ միշտ
մեզուոր է լինում սիրոյ ընկերը մեր սառչելու
մէջ. աւելի ճիշտն այն է, որ ինքը մեր սէրը
մեծ չէր, և բաւականաչափ օժտած չէր յա-
բատութեամբ, և յատկապէս այդ պատճառով
հանգաւ մի քանի օրից կամ մի քանի ամսից
յետոյ:

Այդպիսի դէպքերում մնում է մի միջոց.
բաժանել անկեղծութեամբ և հասարակ կեր-
պով, ինչպէս վայել է ջենտլմենին:

Բարեբաղդաբար, աւելի յաճախ է պատա-
հում, որ սիրոյ բոցը հանգչում է երկուսի սրտե-

րումն էլ գրեթէ միաժամանակ:

Ձեր անկեղծութիւնը դուրս կկոչէ և ձեր
ընկերի անկեղծութեանը, և դուք կբաժանուէք
խաղաղ, առանց արտասուքների, առանց ար-
ինհնդութեան:

Դժուար չէ բանալ այն, ինչ արդէն չի կա-
րող այլևս փակած մնալ:

Եթէ կպատահի, որ միայն դուք էք ցած ի-
ջել սիրոյ այրող բարձրութիւնից հովատուն
դաշտը, իսկ ձեր ընկերը շարունակում է ապ-
րել այդ բարձրութիւնների վրայ, այն ժամա-
նակ, իհարկէ, նորան սպասում են սչ քիչ դառն
արցունքներ, և բաժանումը շատ ծանր կլինի:

Բայց և այնպէս այդ վիշտը աւելի լաւ է
քան կեղծ աւսրութիւնը,—ամենօրեայ, ամենժա-
մեայ կեղծաւորութիւնը:

Եթէ ձեր սէրը եղել է ազատ, և նորան
չեն փակել երդմնական պայմանագրի շղթա-
ները,—ձեր կեանքը կփշռուի, հեշտ չի լինի ձեզ
տանել այդ ծանր փոթորիկը. այնուամենայնիւ
դուք ազնիւ ու մաքուր խղճով կբաժանուէք
միմեանցից:

Իսկ եթէ ընդհակառակը, երդմնական պայ-
մանը Աստուի և մարդկանց առաջ պնդացրել
է շղթան, որը վարդի հիւռեքից յետոյ փոխել
է երկաթէ կապանքների, դուք այնուամենայ-
նիւ կարող էք այն ժամանակ պահպանել ամ-
բողջ կեանքում անկեղծ և ազնիւ բարեկամու-

Թիւն գէպ միմեանց, կարող էք պահպանել փո-
խադարձ յարգանքը և կարող կլինէք խաղաղ ու
պարզ սնցկացնել միասին ձեր կեանքի մնացորդը:
Ամենակողման և ամենավրդովեցուցիչը սի-
բոյ բոյր մեղքերից, ինչպէս կրօնի և օրէնքի
առաջ, այնպէս էլ բարոյականութեան առաջ—
աղջկան խափելու գիտաւորութիւնն է, նորան
անմիջապէս դէն քցելու նպատակով: Այդ կո-
պիտ և անարգ մեղքը արժանի է յատկապէս
ուրիշ անւան—«ս ճ ր ա գ օ ր ծ ու թ Ի ւ ն» ան-
ւան: Դա իսկապէս սճրագործութիւն է ինչպէս
մարդկանց, այնպէս էլ Աստուծոյ առաջ: Նորան
պատժում է կրօնը, դատաւարակամ գեհէնի
կրակներին, իսկ օրէնքը ենթարկում է նորան,
նայած հանգամանքներին, որոշ թւով տարի-
ներ բերդարգելութեան: Բայց գժօխքի սոսկա-
լի տանջանքները դեռ այնքան հեռու են, իսկ
դատաւորը շատ հազիւ և ամենին այնքան էլ
խիստ չի պատժում այդ կոպիտ սճրագործու-
թիւնը: Մեղապարտի խաբէութիւնը և սուտ
երդումները, նորա փաստաբանների ճարպի-
կութիւնը կարողանում են մի քանի միջոցներ
գտնել հեռացնելու, ինչպիսի էլ որ լինեն, պա-
տիժները: Իսկ ինչ վերաբերում է հասարակա-
կան կարծիքին, որը այսպիսի դէպքերում պէտք
է կատարէր բարձրագոյն դատարանի դերը, նա
էլ խիստ յաճախ շատ գիջողարար է վերաբե-
րում գէպի մեղապարտը:

Սիրոյ այսպիսի հարցերում, ինչպէս են օ-
րինակ հրատուրելը և անաւակութիւնը, մե-
ծամանութիւնը էլի դեռ մնում է Լուկուլլոսի
քաղաքի այն բնակիչների կարծիքին, որոնք
ժպտալով և ուսերը թափ տալով, այնպէս յա-
ճախ և այնպէս սիրով կրկնում էին ցինիքական
և ծաղրական այս տառուածքը—«Questo non
guasta il galantuomo»—(Այդ չի փշայնում
չենալմենին):

Դատաւորեայ խափելու կոպիտ յանցանքը
կրէք չեն կարող գործել բարձր, բառիս ճշմա-
րիտ նշանակութեամբ քաղաքակրթւած մար-
դիկ, և անպատճառ պէտք է անհետանայ քա-
ղաքակրթութեան յետագայ զարգացման հետ:
Մեր բարոյականութեան ցգացումը աւելի ու
աւելի է զարգանում իդէալականութեան տա-
րածելու հետ: Միտ կողմից, ընդհանուր կրթու-
թիւնը աւելի է ընդարձակում և տղջիկներին
ու կանանց դատաւորեայ խաբելու յանցանքը
անպատճառ պէտք է բոլորովին անհետանայ
մարդկային մեղքերի ու յանցանքների ցուցակից:

III

Յուսով եմ ոչ որ իմ լինթերցողներից երբևիցէ չի մեղադրել աղջկան կամ կնոջը դիտաւորեալ խտրելու մէջ, նախապէս մտածելով հէնց անմիջապէս թողնել նորան: Քայց, հաւանօրէն նոյնը չի դուրս գայ, եթէ խօսենք զէպի կինը անհաւատարիմ լինելու յանցանքի մտին, լինի դա սիրունի թէ ամուսին: Հազիւ թէ պատահի տղամարդկանցից մէկը, որը յանցաւոր չի եղել, չէ, կամ չի պիտի մեղանշէ հաւատարմութեան դէմ, որովհետև գրեթէ դոքա բոլորը նոյն կարծիքին են, ինչ որ արդէն մեր յիշած Լուկիուլլոսի քաղաքացիների կարծիքն է «questo non guasta il galantuomo»—այդ չի փշայնի ջննալմենին—:

Ես անձամբ ամենևին համաձայն չեմ մեծամասնութեան այդ կարծիքին և նոյնպէս չեմ էլ անցնում նոցա կողմը. որոնք, թոյլ տալով աղամարդի անհաւատարմութիւնը, բացասում են այդ իրաւունքը կանանց համար: Քայց ես խոստովանում եմ, որ անհաւատարիմ կնոջ յանցանքը անհամեմատ մեծ է տղամարդինից. թէև տղամարդին էլ չի կարելի արդարացնել այդ գործում, ինչպէս որ ես աշխատել եմ հաստատել այդ իմ «Սիրոյ բնախօսութիւն» գրքում:

Եյս յօդուածում ես կցանկանայի հետազօտել անհաւատարմութեան պատճառները սիրոյ մէջ. ես կցանկանայի խորը փորել ու փորփրել ամբողջ հողը, որի մէջ թաղւած են այդ մեղքի արմատները: Ամբողջ արտաքին մասը այդ ծառի միշտ մեղ մօտ է, մեր աչքի տուալ. բունը, ճուղքերը, տերևները, ծաղիկները և պտուղները, բայց մենք շատ հազիւ ենք հասնում մինչև արմատներին, որոնք,—սկիզբն ու աղբիւրն են այդ ամբողջ արտաքին փարթամ բուսականութեան: Մինչև անգամ այն դէպքում եթէ մենք վարպետութեամբ, արագութեամբ և զգուշութեամբ դուրս ենք հանել բոյսը և թափ ենք տւել նորա արմատներից հողը, այնուամենայնիւ անհնարին կլինէր չկտրել, կամ չկտարել ամենափոքրիկ և ամենաբարակ արմատի մի շիւղը, որ այնպէս էլ կմնար հողի մէջ անտեսանելի բոլորի համար: միշդեա յատկապէս հէնց դոքա են տալիս սնունդ և կեանք ամբողջ ծառին:

Մի ուրիշ դժւարութիւն էլ կայ, քան սովորական բոյսերի համար, սիրոյ մեղքերի արմատները որոնելիս: Արտաբուսա սիրոյ բոյսերը բոլորը շատ նման են միմեանց, բայց որքան տարբեր են դոցա արմատները: Ո՛րպիսի պարբեր հոգաշերտերից են ստանում դոքա իրանց սնունդն ու կեանքը: Մի քանիսը իրենց մէջ ընդունում են հիւթք ամենանուրբ և ամենամակերայ-

Թակսն արմատներէց. բաւական է մի ձեռքով
զուրս քաշել տունկը և անմիջապէս առանց ամե-
նափոքր փնասի նորան կարելի է տեղահան անել:

Ընդհակառակը, լինում են բոյսեր այնպիսի
պինդ հողի մէջ ամենախոր մտած արմատնե-
րով, որ մինչև անգամ բահով ու քլունդով էլ
չի յաջողում գտնել նորա արմատների բոլոր
մանր ճիւղատրութիւնները:

Իհարկէ, կարելի է զուրս կորզել բոյսը
մինչև անգամ արմատով, բայց մեծ աշխատան-
քով, մեծ վէրքերով. և դրանից յետոյ հողի
հէջ կմնան կտրուած արմատները: Որքան կա-
պեր, ուրախութեան և վշտի զգայմունքներ
օտիպուած կլինենք ոչնչայնել այս զէպրում:

IV

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ամե-
նաողջախոհ և ամենափոքր պահանջ սննեցող
ինն էլ այնուամենայնիւ ամենամեծ իրաւունքն-
օկւնի ծաղիկներ քաղելու սիրոյ ծառից և մին
չև անգամ թեկնածել նորա պտուղներին, ս-
րոնք տալու են նորան բաղգաւորութիւններից
ամենարարձրը—մայրութեան բաղգը:

Եւ եթէ նորան դաւաճանում են, եթէ նո-
րան խափում են նորա ոչոք սրբազան իրաւուն-
քի մէջ, հասկանալի է, որ նա կվրդովի, որ նա
սկզբում կատէ ինքն իրան, իւր ամօթխածու-
թեան սիրային ցանկութիւնների ամենախոր

գաղտնարաններում. «Դու կին ես, իսկ ինչն
նա աղամարդ չէ քո վերաբերմամբ».—Յետոյ այդ
միկնոյն դանդաղը նա կկրկնէ բարձրաձայն, և
նորա առաջին կասկածները իւր սիրած մար-
դու հաւատարմութեան վերայ, կյգանան նորա
մէջ վրէժխնդրութեան առաջին մաքերը... Իսկ
այդ ժամանակ կարող է պատահել, որ նա էլ
նոյնպէս դառնայ պարտքի և պատի ճանապար-
հից, որ նա էլ նոյնպէս դաւաճանէ և խարէ՛
այդ ծաղիկները և սիրոյ պտուղները քաղելու
նպատակով, որոնց թեկնածել եւայլ իւրաքան-
չիւր աղջիկը ունի մեծ իրաւունք:

Իբրև բժշկի և շատ կանանց գաղտնագէտի,
ինձ անծանօթ չեն նոցա նահատակութեան և
առարկնութեան գաղտնիքները: Ենթադրենք,
օրինակի համար, սր ամուսնութիւնը չի տւել
կնոջը ոչ զբարձութիւնների ծաղիկներ, ոչ
մայրութեան պտուղներ: Մի քանի ժամանա-
կից յետոյ նրա համար պարզում է, որ նա այլ
ևս կրէք զբարձանալու չէ մաքուր սիրոյ հրրճ-
ւանքներով, որ նորա աունը չի զարգարելու իւր
ծնած կրեխայի օրօրոցը: Բայց զորա հեռ մի-
ասին իմանալով և այն, թէ նորա կեանքի ըն-
կերը, սրին նա յարգում է ու սիրում, ոչնչով
մեղաւոր չէ, նա արիարար, հերոսաբար վրճ-
ում է փախչել ամօթարկ պաւաճանութիւ-
նից, մնալ մինչև կեանքի վերջը անպտուղ
ու անդաւակ:

Այս դէպքում նորա սիրոյ ընկերը ամուսին չէ այլ բարեկամ. և կինը ցանկանալով քաղելի սիրոյ ծաղիկները և ոչ թէ ձեռք բերել նորա պտուղները, — այնուամենայնիւ նա միշտ հաւատարիմ կըմնայ իւր բարեկամին, միայն թէ նա սիրէր նորան քնքոյշ և ջերմ, միայն թէ նոցա կապէր միշտ հոգիների միաւորումը:

Մենք միշտ նոյնացնում ենք կանանց ցանկութիւնները և պահանջները մեր սեփական պահանջների և ցանկութիւնների հետ, և գրեթէ երբեք չենք հասկանում մեր ընկերուհիների բարձրագոյն ձգտումները: Այն ինչ, քանի զեռ կինը գոնեայ մի փոքր բարձր է կանգնած էզից, նա գրեթէ միշտ զերազատում է սէրը հեշտասիրութիւնից, հեշտասիրութիւնը առանց սիրոյ, միայն մի պայմանով, որպէս զի այդ սէրը լինի անկեղծ, անդաւաճան, տաք և խոր: Այդ տեսակէտից կանայք կատարեալ հակապատկերն են կազմում տղամարդկանց:

Մեր բոլոր ասածից հեշտ է եզրակացնել, որ կընոջ անհաւատարմութիւնը, հիմնւած միմիայն բնական անբաւարարութեան վերայ, շատ և շատ հազւագիւտ է:

Մինչդեռ ամբողջ շարունակում է մտածել, որ երկտասարդ կնոջ ծեր ամուսինը պէտք է անպատճառ և անխուսափելի զոհ դառնայ դաւաճանութեան: Եւ եթէ պատահում է դորս նման մի բան, արդէն այլ ևս ոչ ոք չի խղճայ

ծերունուն, և բոլորը կներկն նորա անհաւատարիմ կնոջը, «Tu l'as voulu, Georges Dandin»:

Նոյնպէս և տղամարդկանց համար բնական անբաւարարութեան պատճառը երբէք չպէտք է ծառայի իբրև աղբիւր նոցա անհաւատարմութեան. սրովհետև եթէ կինը կարող էլ լինի երբեմն անպտուղ մնալ, նա, այնուամենայնիւ, միշտ կարող է տալ տղամարդին սիրոյ ուրախութիւնները: Միայն այն երկընկերում, սրտեղ ամուսնութիւնները հիմնւած են անպայման որդէծնութեան պայմանի վերայ, տղամարդը իրաւունք սեւի հեռացնել անպտուղ կնոջը: Մինչդեռ մեր մէջ էլ քիչ չեն ամուսիններն ու սիրահարները, որոնք դաւաճանում են իրենց ընկերուհիներին միայն այն պատճառով, որ վերջիններս, այս կամ այն բնական պակասութեան պատճառով, անընդունակ են մասնակցել նոցա սիրային յուզումներին:

Այսպիսի դէպքերում տղամարդն իրեն զգում է վերաւորւած, գտնելով, որ սիրոյ խնճոքին նորան զրկում են ամենալաւ պարգևից: Նա վրդովւում է և մի այլ տեղ է որոնում այն, ինչ որ չի կարողացել ձեռք բերել իւր ամուսնական կեանքում:

Ամենաշողորմ ջանկութիւնը, որը յատուկ է գրեթէ բոլոր կանանց — լինել գեղեցիկ՝ շատ գեղեցիկ, ամենագեղեցիկը գիւղի, կամ ամբողջ

քաղաքի միւս բոլոր կանանց համեմատութեամբ:
Կանայք գիտեն, որ գեղեցկութիւնը նոցա ամենա-
զօր սյժի գէնքն է և, որ նոցա առաջին փառքն
է—գրգուել ցանկութիւնները և վառել սիրոյ կը-
րակը: Քարոյականութիւն քարտղոյ հեղինակու-
թիւնները և կրօնական ուսմունքերը իհարկէ
այդ բանում չեն տեսնում կնոջ կոշումը և ցոյց
են տալիս Եւայի դուստրներին աւելի բարձր
խնդիրներ: Յայց մինչև իսկ այն գէպքերում
կրք կանայք իրենց առանձնութեան ազատ
ժամերը նսիրում են կրօնական և քարոյական
բովանդակութեամբ բարձր զրքերի, նորա այ-
նուամենայնիւ, կրք գեո նօր են դուրս եկել
ժողովրդի մէջ, կամ թէկուզ երկայել են փո-
ղոցում, անսպասան, իսկոյնեկթ աշխատում են
երկալ խրեանց կախարդանքների բոլոր գէն-
քերով և շքանշանում են ու հպարտանում, և
թէ զրգուում են բոլորի հիացումը և ցանկութիւնը:

Այդ բոլորից բնականաբար հետևում է, որ
կինը ընդունակ չէ բաւականապէս միայն այն
բանով, ինչ դուր կգայ այն միակ մարդուն, ո-
րին ինքն է ընտրել, կամ որը իրեն է ընտրել:
Առանց իւր կազած երգմնական սպայմանը խախ-
տելու մի որևէ մտադրութեան, կինը այնուա-
մենայնիւ դարձանում է, երբ ուրիշներն էլ,
բացի իւր սիրած մարդուց, հիանում են իրե-
նով,—նա զարճանում է այն գիտակցութեամբ,
որ և ուրիշները կեանքը կտային իւր սիրոյ համար:

Ո՛ր կինը, մտնելով խնճոյքի գահիճը կամ
թատրոնի օթեակը և լսելով իւր ներկայու-
թեան յուզած հիացմունքի շշուկը կամ տեսնե-
լով, որ բոլոր աչքերը և գիտակները ուղղւած
են դէպ իրեն, չէր հրճւի այդ բանից: Մենք
չենք դատապարտում զօրավարին, եթէ նորա
գէմքը բաւականութիւնից կարմրում է, կրք
կուրի դաշախց յաղթական վերադարձի ժամա-
նակ, ժողովուրդը դիմաւորում է նորան խրա-
խուսանքի և ցնծութեան աղաղակներով: Ընդու-
նում ենք և բանաստեղծին ու երաժշտապէտին
համակոյ խնդութիւնը, կրք նորա տեսնում են,
թէ ինչպէս սղջ ամբոխը գրաււած ու արբած
է իւրեանց սգեորութեան ստեղծագործած ս-
տանաւորներով ու մեղեդիներով:

Այդպէս էլ, կանանց փառքը—նոցա գեղեցկու-
թիւնն է: Գեղեցկութիւնն է այն կախարդանքը,
որոնցով կանայք գերում են ազամարդկանց,
նօքա այդ գիտեն և լռելայն արբենում են ի-
րենց այս բաղդով, ծծելով նորան կաթիլ առ
կաթիլ, շկորցնելով ոչ մէկը նոցանից, նման ա-
նապատում, անծայր աւազի մէջ ծարաւօղին,
որը յանկարծ, անսպասելի ձևօք է բերում օ-
տղիսում սաւը, արծաթանման աղբւր, որտե-
ղից նա սկսում է ազահութեամբ խմել:

Առաքինի կինը, գեղեցիկ և սիրւած, ականջ
չի դնի, իհարկէ, ամեն կողմից իրեն ուղղւած
մէլը խնդրոյ հառաշանքներին: Ոչ մի կերպ

չպատասխանելով դոցա, նա ամենասովորական կերպով լսում է այդ հառաչանքները և շտապում է դնել նոցա իւր սիրած մարդու օտնների տակ: Առաքինի կինը բաղդաւոր է նրանով, որ գեղեցիկ է, որ բոլորը համարում են նորան գեղեցիկ:—Նա հպարտանում է նորանով, որ կարող է իւր այդ յաղթանակները, իբրև արժանի տուրք, մասնուցանել իւր կեանքի պաշտի ուղեկցին: «Ես գեղեցիկ եմ—ասում է նա ինքն իրեն—բոլորը ինձանով զմայլում են, բայց ես պատկանում եմ միայն նորան»:

Բայց եթէ կինը, որը իւրաքանչիւր քայլափոխում յուզում է ցանկութիւններ, հառաչանքներ և սէք, շատ էլ բաղդաւոր չէ, կամ բոլորովին անբաղդ է, եթէ նորա կեանքի ուղեկիցը նորա սէքը դարձրել է իրեն համար մի տեսակ հաց, որով կերակրւում է արդէն առանց որևէ ցնծութեան, առանց որևէ հրախտադիտութեան, և եթէ նա մոռանում է յաճախ կրկնել, որ նա գեղեցիկ է, սիրուն է, այն ժամանակ կինը սկսում է ցանկանալ մի աւելի, մի ինչ որ ուրիշ բան, և, իհարկէ, իւր երկրպագուների խմբի մէջ նա շուտով գտնում է նորան հէնց որը կտայ նրան այդ ինչ որը:

Սակայն, այդ պայմաններում, տղեղ կանաչը շատ աւել յաճախ են մեղանշում քան գեղեցիկները: Վերջինները մեծ մասամբ բաւականանում են նրանով, որ բոլորը իրենցով սքանչանում

են և, որ նորա այդպիսով ներս են ծծում իրենց յուզած սիրոյ խնկահոտը: Ընդհակառակը, տղեղ կանաչը ուղղակի կատաղութեան մէջ են ընկնում, որ երբէք նոցա չի պատահում լսել ոչ իրենց երեւալուց յառաջացած հիացմունքի շշուկը, ոչ սիրոյ հառաչանքներ, ոչ ցանկութիւններ: Եւ ասա նորա նազկըութանքով, զանազան տեսակ խորամանկութիւններով աշխատում են ձեռք բերել երկրպագուներ: Ամուսինը, օրինակ, ընտրել է իրեն կին մի տղեղի, միայն օժիտի համար, կամ այլ հաշիւներով. բայց կինը չի կարող հրաժարել բարւոյ և շարի գիտութեան ծառի կախարդիչ պտուղներից. նա շատ ջերմ ցանկութիւն ունի, որ մեռնելուց առաջ մէկը ջերմ սիրէր նորան հէնց իրեն պատճառով, որպէս զի ինքն էլ գտնէր կրքոտ, իրենով հրճուող սիրահար:

Գեղեցիկ են արդեօք կանաչը, թէ տղեղ: Բայց նորա բոլորը անպատճառ գիտում են մէկ մէկու և նախանձում են մէկը միւսին: «Եթէ այսինչը, բացի ամուսնուց, բարեկամ էլ ունի, ապա ես ինչով եմ նորանից վտառ. միթէ ես աւելի պակաս գեղեցիկ, նրանից պակաս արժանի եմ ուշադրութեան»: Նմանելու ձգտումը այսպիսով դառնում է նախանձին գործակից: Անել այն, ինչ որ անում են ուրիշները—յատուկ է ոչ միայն ոչխարների հոտին, այլ և մեր մոլորակում ընտկուող կենդանիների մեծամասնութեանը և ամենից

առաջ մարդուն: Միևնոյն կինը, նայելով թէ արդեօր ծնւած ու մեծացած է նա այնպիսի բարոյական շրջանում, որտեղ ամուսնուն դաւաճանելը միայն հազուադէպ երեոյթ է ներկայացնում, կամ թէ, ընդհակառակը, այլ շրջանում, որտեղ անհաւատարմութիւնը հազու թէ ընդհանուր կանոն չէ—մնում է հաւատարիմ առաջին դէպքում և անհաւատարիմ կլինի երկրորդում:

Պէտք է ունենալ խիստ ուժեղ բնասորութիւն, պահպանելու համար մարբութիւնը, անառակ և բոլոր սիրային հարցերին թեթե վերաբերող շրջանում:

Մի մեղքը ծնում և բերում է իւր ետևից միւսը և այսպէս անվերջ: Այդ վշտայի երեոյթը մենք գրէթէ միշտ մոռանում ենք, երբ դանդենք առնում մարդու և քաղաքացու պարտականութիւնները: Մեղանից ամեն մէկը շնչում է միևնոյն մթնոլորտում, որը նրան շրջապատում է, բայց իւրաքանչիւրը մեղանից միևնոյն ժամանակ և ստեղծում է նոյն այդ մթնոլորտը, այն բարոյական սահմանը, որի մէջ ապրում ենք մենք բոլորս:

Առաքինի կինը անգիտակցաբար դառնում է բարութեան ուսուցչուհի իւր քոյրերի, բաբկամուհիների համար: Ընդհակառակը, անհաւատարիմ, անառակ կինը միւսներին էլ կը սովորեցնի յանցանք և անհաւատարմութիւն: Գժթախտաբար, երկրորդի ազդեցութիւնը ան-

համեմատ աւելի ուժեղ է, քան առաքինի կընոջ ազդեցութիւնը:

Այսպէս ուրեմն, կինը շատ անգամ մեղանչում է նմանելու զգացմունքից զրրւած: Քանի որ կատարած է առաջին յանցանքը, կատարել երկրորդը արդէն հեշտ է, երրորդը աւելի հեշտ և այլն, այսպէս անվերջ: Ո՞վ յանձն կառնի հաշել բոլոր անհաւատարմութիւնները, կանանց բոլոր դաւաճանութիւնները, եթէ նա արդէն մի անգամ վճռել է լինել մէկը այն կանանցից, որոնց ընդունւած է անւանել թեթե բարքի տէր կանայք: Այդ, մեր հայեցակետով, շափաղանց փափուկ և ներողամիտ հոշումով սովորաբար ընդունւած է անւանել շնութեան մէջ մեղանշող կանանց յատկապէս այն ժամանակ, քանի դեռ նորք ջահիլ են և գեղեցիկ:

Տգեղ կնոջ համար չկայ տելի գրաւիչ յանցանք, քան խելու հնարասորութիւնը իւր բարեկամուհուց և, գեղեցիկութեամբ ու աշխարհային յաջողութիւններով, հակառակորդուհուց նորա երկրպագուին, նորա սրտի սիրելուն: Այդ յանցանքը այնքան գրաւիչ է, որ կինը յափշտակում է օտար սիրահարին մինչև անգամ առանց յանկուժեան, մինչև անգամ շփրելով նորան, միայն թէ ծակէ հակառակորդի հպարտութիւնը. մնացածը նորա համար անխտիր է: Տղամարդը, խամ, շատ հեշտութեամբ է թոյլ տալիս իրեն յաղթելու. նա այնպէս պատրմատ է խոնարհ-

ևել կանացի ժպիտի առաջ, կանացի հայեացքի
առաջ կամ նորա փոքրիկ ստիկի նաղելի շարժ-
ման առաջ:

Լինում են սգեղ կանայք, որոնք աստուածա-
ցնում են իրենց ամուսինների և բարեկամների
սիրտը և պաշտում են փոխադարձաբար, բայց
միևնոյն ժամանակ, չեն կարողանում ընդդիմա-
նալ գայթակղութեանը՝ բարեկամուհուց խլե-
լու այն մարդուն, որը աչքի է ընկնում կամ
մեծ գեղեցկութեամբ, կամ մեծ համբաւով, և
կամ մեծ յաջողութեամբ սիրային արկածնե-
րում, քան նոցա սեփական բարեկամը: Այդ տե-
սակի դաւաճանութիւնը չի յառաջանում
ոչ ցանկութիւնից, ոչ սիրուց, և թեթեւ յաղ-
թութիւնից յետոյ, կինը իսկոյնեթ և ընդմիշտ
բաժանում է յաղթւածից: Բաւական է, որ
ընկերուհին իմանայ այդ արկածի մասին և, որ
նորա կանացի և սիրային հպարտութիւնը ոչըն-
չացրած է: Այս տեսակ վարմունքների մէջ կա-
նայք ցոյց են ապիս արաստվոր անդթութիւն
և ճարպիկութիւն. այդ տեսակէտից նոքա զար-
մանալի գոյեր են և մարդասպաններ:



Վ

Ինքնասիրութիւնը, իւր բոյոյր ճիւղաւորու-
թիւններով, փառասիրութեամբ, սնափառու-
թեամբ և ոտխութեամբ, արդէն ինքն ըստ
ինքեան ընդունակ է հարկադրել կնոջը, իսկ
հաղազիւս դէպքերում նոյն իսկ աղամարդին,
— ընկնելու անհաւատարմութեան մեղքի մէջ:
Ո՞ր կինը, ինչքան էլ նա առաքինի ու ժուժ-
կալ լինէր, չի երեակայել երբեիցէ երկար ժա-
մերով, այն մասին թէ նորան կսիրէ մի որեէ
իշխան, թագաւոր կամ մի նշանաւոր մարդ, չի
կրակել այն մասին, որ և սէրը, կարող է պա-
տահել, միացած կլինի գեղարեւոտի, գիտու-
թեան և զրականութեան յաղթանակի հետ:

Սիրւած լինել հանճարեղ մարդուց—այդ
որքան լաւ պիտի լինի: Որքան գեղեցիկ է լի-
նելու նորա ճակատը շրջապատող ճաճանչների
փայլը: Հանճարեղ մարդու սէրը—մի աստուա-
ծային բան է:

Մնուհետև—հեռում փայլիլոյ յոյսը չի
մեւնում բոլորովին, երբ հնչում է վերջին ժա-
մբ. պատմութեան մէջ մի փոքրիկ երես բըր-
նելու, մինչև անգամ երկու—երեք սողիկներ և
կապելու իւր անունը մեծ մարդու կենսագրու-
թեան հետ: Ո՞րպիսի բազդ է խոստանում այն

միաբը, մնալ միշտ ուղեկից շողջողուն մայրա-
կի և յաւիտեան ուղեկցել նորան, նորա լու-
սաւոր հոսանքում երկնային պայծառ տարա-
ծութեան միջով . . . լինել Բէյաթըիչէ Դան-
թէ կամ Լաուրա Պէտրարկա:

Նման երազների մէջ սակայն ամեն ինչ ու-
նայն չէ, միայն ինքնասիրութիւնը չէ: Կանանց
մէջ աւելի անձնազոհութիւն կայ քան տղա-
մարդկանց. նա աւելի անձնազոհ է և սիրոյ մէջ:
Սիրելով մեծ մարդուն, նա կարող է յուսալ
լինելու նորա պահապան հրեշտակը, նորա յա-
ւերժահարս էղերիան, նորա սփոփելը բոլոր
դառն քաղցներին, նորա կեանքի բոլոր ձա-
խորդութիւններին. նա կարող է յուսալ պահա-
պան կանգնել նորան ուղառնացող բոլոր վը-
տանգների առաջ:

Անտեսանելի կերպով կինը նորա հետ է.
երբ նա արբեհում է ստեղծագործութեամբ,
նա օժանդակում է նորան աշխատանքի մէջ:
Համեստ և բոլորից աննկատելի, նա այնուա-
մենայնիւ զգում է, որ նորա համար նա ամեն
բան է, այն հրեշտակը, որը նորան ժպտում է,
այն բարի և ներող էակը, որը տանջում է նո-
րա համար, խղճում է նորան և ամեն ինչ նե-
րում: Միայն նորա համար է նա աշխատում ու
մտածում, նորա համար է գրում, նկարում
կամ յօրինում յօդաւածներ. և նորա քաջախելու-
թիւնը—առաջին և ամենարարձր պարգևն է

նորա բոլոր աշխատանքների:

Ո՛րքան ցնորքներ կան այդ տեսակ երազ-
ների մէջ. որքան հիասթափումներ այդ տե-
սակ յայտերի մէջ: Մի Ստիւարդ Միլլի հետ,
որը բարձրաձայն խոստովանում էր, թէ իւր
գաղափարների ամենալաւ մասով պարտական
է իւր ընկերուհուն, որքան մեծ մարդկանց կա-
րելի է յիշել, որոնք իրանց սիրոյ մէջ շատ
մանր են երևում, որոնք կնոջ վերայ նայում են
իրեւ էգի վերայ:

Բայց և այնպէս այդ տեսակ հիասթափում-
ները ոչ մի ժամանակ դեռ չեն արգելել և եր-
բէք չեն արգելի շատ կանանց դաւաճանելու օ-
րինակելի ամուսնուն կամ սրտի հաւատարիմ
ընկերին, սրպէտղի հետապնդեն փառք և հրու-
շակ ձեռք բերած մարդկանց յետեից: Այդ տե-
սակ կանայք երբէք չի պիտի զրաւէին մի, ի-
րենց կեանքի ուղեկցից աւելի երիտասարդ, ա-
ւելի գեղեցիկ տղամարդով: Բայց փառք ունի այն-
պիսի հմայքներ, որոնք ստիպում են մտանալ
ամեն ինչ, որոնք յաղթում են ամենապիկող,
փորձաւոր հակումը դէպի առաքինութիւն, չըր-
ջում են ամենաուժեղ բնաւորութիւնները: Այդ
կուռքի պատանդանի մօտ ամեն ինչ ընկնում
է երեսի վերայ—մարմինը և հոգին, զգայական
նութիւնն և զգայմունքը:

Ոչ անբաւականութեան զգայմունքը, սիրու-
յին զւարճութիւնների սահմանում, ոչ վրէժ-

խնդրութեան ծարաւը, ոչ նախանձը, ոչ բոլորը միասին վերցրած, մեզ դէպի յանցանքը մղող շարժառիթները, շունեն այնպիսի ոյժ, այնպիսի դորութիւն, ինչպէս հետաքրքրութեան զգացմունքը առանձին վերցրած:

Մեր, հենց նոր արտայայտած համոզմունքը կտաիպէ ընթերցողին—ես դորանում հաւատացած եմ—իսկոյն կնճռել ճակատը, բողբոջու նպատակով. իսկ բոլոր ընթերցողուհիների ժրպիտը կզրզուէ, ծիծաղը և մինչև անգամ դորանից աւելին—ծաղրը: Ընթերցողի գեղահոյսութիւնը և ընթերցողուհիների ժպիտը, հաւանօրէն, կարտայայտին հեղինակի համար ոչ այնքան էլ գովասանական բացականչութիւններով, հետևեալ կերպով. «Ի՛նչ այլանդակ մարդ է այդ Մանանգացցան և ս՛րպիսի ծաղրածու ի՛նչպիսի սիրող պարագոկաների»: Եւ կամ այս ձևով. «Ասացէք խնդրեմ, իջեցնել տարփանքը մինչև հասարակ հետաքրքրութեան, այն տարփանքը, որը դաւաճանութեան հասնելու համար պէտք է անպատճառ ունենայ արտասովոր, անպարտելի ուժգնութիւն: Ի՛հ հ, այդ արդէն գուտ անխելքութիւն է»: Սակայն թող բարեհաճ ընթերցողը կնճռտէ ճակատը, և իմ թանկագին ընթերցողուհիները ծիծաղեն և մինչև անգամ ծաղրեն—իսկ ես շարունակում եմ պնդել իմը և յետ չեմ նահանջիլ իմ հայեացքից, սբը դուքս է բերուած կիսագարեան,

մարդկային սրտի մանրամասն զիտողութիւններից:

Տղամարդիկ և կանայք, ընկնելով անհաւատարմութեան յանցանքի մէջ, ամենից յաճախ դրուում են դորան հետաքրքրութեան զգացմունքից: Այդ յատկանիշը ես կամենում եմ նշանակել՝ սէրը դէպի ամեն մի նորութիւն, հետապնդումը շփոթած բանին, ծարաւը անծանօթ տպաւորութիւնների և զգացողութիւնների:

Օրօրոցից մինչև գերեզման, մարդս միշտ սպասում է ի՛նչ որ բանի, մի բանի ձգտում է, անդադար և անվերջ սրտնում է նորանոր զգացողութիւններ, նոր մտերմութիւններ, նոր իղէալներ: Ամենալաւ բառականութիւնը—որոնելն ու գտնելն է, և բարձրագոյն գարձութիւնը—երբ սրտնումներս վերջին վարկեանը դառնում է գիւտի առաջին քապէն: Այդ բողբոջ կայծից բոցի է փոխում, սբը ժամանակի ընթացքում սկսում է փոքրանալ և հանգչել, մինչև որ յայտնւում է անտարբերութիւնը, որը ստիպում է մեզ նորից որոնել՝ նորը գտնելու համար:

Եթէ սէրը շարունակում է միայն ամիսներով և տարիներով և միայն հաղազիւտ դէպքերում ամբողջ կեանքի ընթացքում, ապա այդ յառաջանում է նրանից, որ կատարւում են նոր սրտնումներ և արւում են նոր գիւտեր. և հետևանքում օտացւում է մի պատկեր, շատ

մօտ յիշեցնող Բուժկֆօրի էլէկտրական մեքե-
նայի ընդհատող հասանքը:

Այդ ամենատարրական բնագիտութեան և
հոգեբանութեան անխուսափելի օրէնքներին
կամայ թէ ահամայ հնազանդւում են տղամար-
դիկ և աւելի շատ կանայք. և այն պատճառով
յաակապէս կանայք, որովհետև մեր գեղեցիկ
քաղաքակրթութիւնը խլել է նոցանից հոգե-
կան յուզմունքների շատ աղբիւրները, պատ-
րաստելով նոցա համար միապաղաղ և միա-
կերպ կեանքը, գրեթէ միշտ գուրկ գրամատի-
քական դրութիւնից և կուրից:

Այդ այնքան ճիշտ է, որ այն դէպքերում,
երբ իւր խելքի ոյժով և ընդարձակ դարգաց-
մամբ աչքի ընկնող կինը գտնում է իւր կեան-
քում ոչ քիչ աղբիւրներ գործունէութեան. և
յուզմունքների, սիրոյ սահմանից գուրս. նա
միշտ, կամ գրեթէ միշտ, չի ենթարկւում դա-
ւաճանութեան յանցանքին, և պահպանում է
հաւատարմութիւնը սիրոյ մէջ:

Ընդհակառակ, երբ կնոջ ամբողջ կեանքը
ընթանում է միակ և միևնոյն, միշտ խաղաղ
և անվրդով հասանքով, երբ նորան երբէք չեն
յուզում նոր դէպքեր, նա անպատճառ սկսում
է իրեն հարցնել. «Մի՞թէ, բացի իմ այս ամե-
նօրեայ կերած հացից, սըր կփում է միշտ
միևնոյն վառարանում, որը սեզանի վերայ է
դրւում միշտ միևնոյն ժամին, չկայ մի այլ

կերակուր, գուցէ պակաս համեղ և պակաս
սննդարար, բայց միայն մի ուրիշը,— ոչ այն,
որից ես արդէն կուշտ կերել եմ»:

Գանանց կեանքը նմանում է նաւակով լո-
ղալուն հարթ ջրանցքի վերայով, որը փոր-
ւած է մարդկանց ձեռքով, ամենատեսակ նա-
խադրուչութիւններով: Այդ նաւակի պատերը
ծածկւած են բարձերով, որպէս զի կինը շը-
նեղիչ, ջրանցքում ջուրը միշտ միևնոյն բարձ-
րութեան վերայ է: Եւ կանայք լողում են
հանդարտ այդ անվտանգ, ցանձաղ ջրերում,
այդ խաղաղ հայելանման հարթութեան վերայ:
Նորա պատճառ շունեն վախենալու ոչ փո-
թորկից, ոչ թռչող մրրկից: Բայց, աւանգ,
մենք այնպիսի արարածներ ենք, որ մեզ ան-
հրաժեշտ է լողալ ազատ հոսող գետերով,
որոնց ճանապարհը նախագծել է միմիայն
ընտրութիւնը. այնպիսի գետերով, որոնք լեռնե-
րից են թափւում ծովը, գալարուն, սաստկա-
հո, քմածին են: Նորա հոսում են երբեմն դան-
դաղ և վսեմ, երբեմն վայրենի և ահեղ, եր-
բեմն կանաչ և ծաղկած ափերով, երբեմն քա-
րակոյտերի և ժայռերի միջով: Այդ գետերի
ջուրը երբեմն բիւրեղային է և պարզ, ինչպէս
լճակում, երբեմն ծածկում է փրփուրով և աղ-
մկում է, ինչպէս ջրվէժներում: Հէնց այդ է
խակական կեանքը, որից մենք գրկել ենք մեր
կանանց:

Ահա թէ ինչու Գանանց մէջ այդպէս այ-
ճախ է յայտնուում ցանկութիւն, այդ խաղաղ,
հարթ ջրանցքից ընկնել ազմկող գետի մէջ:
Այդպիսի գէպքերում նոցա առաջնորդող հրա-
պոյրն է հէնց յատկապէս—հետաքրքրութիւնը:
Հետաքրքրութիւնը քցեց Եւային առաջին մեղ-
քի մէջ, ստիպելով նորան ճաշակել բարոյ և
չաքի գիտութեան ծառի խնձորից. բայց, դո-
րա հետ միասին, հետաքրքրութիւնն է հար-
կադրել մեզ ստեղծել գիտութիւնը, ձեռք բե-
րել գեղարւեստը և բանաստեղծութիւնը. հե-
տաքրքրութեան շնորհիւ է գրւած մարդկային
սեռի ամբողջ պատմութիւնը:

Ահա այդ հետաքրքրութիւնն է հարկադրում
Եւայի բոլոր գուտարներին ընդմիշտ որոնե-
լու մի որևէ արտակարգ, անյայտ բան սիրոյ
սահմանում:

Տղամարդիկ էլ նոյնպէս ազատ չեն հետա-
քրքրութեան գրդումներից սիրոյ մէջ, որը
յաճախ հասցնում է նոցա դաւաճանութեան.
բայց տղամարդկանց հետաքրքրութիւնը այդ
գէպքում միշտ անդամազննական կամ կենսա-
բանական բնատրութիւն է ունենում:

Ընդհակառակ, կինը մեղանշում է աւելի
բարձր, աւելի ազնիւ և նուրբ տեսակի հետա-
քրքրութեամբ:

Տղամարդը սովորաբար իրեն հարց է տա-
լիս. «Ի՞նչ տեսակ կլինի այս կինը սիրոյ մէջ».

Ի՞նչ տեսակ բնատրութիւն ունի նա, սրբաբո-
ւազմագլխութեան, ի՞նչպիսի մարտաձևի կհն-
տակի նա սիրային կոնիւնկրի մէջ»:

Գինը, ընդհակառակ, հետաքրքրում է մի-
այն այն բանով, թէ ի՞նչպէս իբր սիրոյ թեկ-
նածուն կքծնի իրեն, ի՞նչպէս կյայտնէ իւր
սէրը, համարձակութիւն ցոյց կտայ թէ կը
չփոթւի, կաշխատի շարժել իրեն պերճախօս
լուրթեամբ, թէ կթափէ խօսքի ամբողջ հե-
զեղներ:

Հագւակիւս գէպքերում կինը չի ընկճում
այսպիսի հոգեբանական հետաքրքրութիւնից:

Խիստ յաճախ, ամբողջովին յոյս դնելով
իրենց ոյժի վերայ և վճռած, ինչ էլ սր լինի,
անձնատուր շլինել վերձութեանը, նոքա այնու-
ամենայնիւ թոյլ են տալիս իրենց հաճոյակա-
տարներին ամեն կերպ սիրաբանելու և հաս-
ցնում են մինչև սիրոյ բացատրութեանը, սր-
պէս զի խոխոյնեթ զայրացած շարժումով
ստիպեն նոցա լուել:

Բոլոր այդ խաշաձև հայեացքները, կաշճես
ոչինչ չնշանակող շվերճացրած խօսքերը, նազ-
կրթան շարժումներն են յատկապէս կազմում
այն զրաւիչ, flirt*) անունով յայտնի խաղը,
որը կանանց մեծամասնութեան համար կեն-
սական պահանջ է և նոցա համար սւնի ան-

*) flirt - ճախրել, սիրահարական մտրով:

հուն չքնադուծիւն և դիւթականութիւն:

Քայց վայ նրանց, որոնք այդ դէպքում չունեն կամքի երկաթէ ոյժ և սառը բնաւորութիւն:

Չառ ու շատ հազիւ կարելի է պատահել հիւր-ի ամենամեծ դերասանուհու, որը նրանում ցոյց տար նոյնքան արտասովոր ճարպիկութիւն, որքան այդ յատուկ է հնդկական ձեռնածուներին, որոնք առանց վիրաւորելու, թըռչում են, պարում և գլորում մերկացրած և սուր սրած թրիւրի ամբողջ անտառի մէջ: Այդպիսի արտասովոր ճարպիկութիւնը «ֆիւրտում» կարժանանար դարմանքի և դեռ աւելի—իրաքանչիւր հոգեբանի ՚իայցմունքին: Ես ճանաչում էի երկու տիկիներին, որոնք, շրջապատւած երկրպագուների բազմութեամբ, այնուամենայնիւ, մնացել էին անարատ և չէին ընկճել մեղքի փորձութիւնից: Գոցանից մէկը, օրինակի համար, երկար ժամերով մնում էր առանձնացած իրեն ջերմ սիրող երիտասարդի հետ, դէպի որը նա ինքն էլ տածում էր փխաբարձը: Արտասուքն աչքերում լսում էր նա նրա բողոքները, վկայ էր դառնում իւր յուզած դայրոյթին, կատաղութեանը, փոթորիկներին և նայում էր նրա արցունքներին, մնալով ինքը միշտ մաքուր և անմատչելի:

Յանցաւոր սէրը ոչ միայն բաւարարութիւն է տալիս կանացի սուր հետաքրքրութեանը,

նորա ձգտմանը դէպի նորը և անյայտը, այլ և կրում է, դորա հետ միասին, նաև բոլոր հրապուրանքները անակընկալների և վտանգների:

Իմ «Կանանց ընխօսութեան» մէջ, ես արդէն հետապօտել եմ այդ խորհրդաւոր, կրքերով լիքը կանացի սրտի աշխարհը, և խորհուրդ եմ տւել կնոջ համար աւելի ընդարձակ սահման որոշել կեանքի կուռում: Ես ցոյց եմ տւել կնոջը, տղամարդկանց երկրպագութիւններով շրջապատւած, միակերպութեան և անգործութեան մէջ թողնելուց յառաջացած վրտանգը: Եւ այժմ էլ ես սնդում եմ միեւնոյնը: Կինը թոյլ է, երկշոտ և նորա երկիւղն ու վախը չի համարում նորա համար անպատուութիւն: Եւ ահա մինք երեւակայում ենք, թէ նորա այդ պակասութիւնները պէտք է պաշտպանեն նորան անյողթելի հրապուրանքից: Կինը չի գնում պատերազմ, չի ընդունում մենամարտի հրաւերը, չի մասնակցում պարլամենտում տեղի ունեցող բանաւոր վէճերին: Նա գրեթէ անմասնակից է զրականութեան, գիտնական և քաղաքական կոիւններին,—բայց նա էլ նոյնպէս մարդ է, նա էլ նոյնքան ցանկանում է, որ իւր սիրտն «նա երբեմն բարախէր վտանգի սպասումից և սպառնալիքից:

Այն ժամանակ, մինչդեռ արամարդիկ ներկայանում են իբրև կուրի դաշտից չնահանջող

անհատները, կանայք կենդրոնացնում են իրենց ամբողջ ազգական բնազդները սիրոյ սահմաններում, որտեղ միշտ նրանց են յանձնում նրազելու առաջին ջութակը, և որտեղ օրէնքը և մեծամասնութեան ներողամտութիւնը տալիս է նոցա այնքան իրաւունք, այնքան միջոցներ սմբակեմութեան և պաշտպանողութեան:

Սիրոյ բացատրութիւնը շշուկով, ամուսնուց կամ սիրողից մի քանի քայլ հեռու, պինդ ձեռասեղմումը հետաքրքիրների և շարախօսների ամբողջի մէջ, թուուցիկ կերպով քաղած համբոյրները—այս բոլորը յանցաւոր, նոյն խակ աւելին—ստոր գլարճութիւններ են, բայց կանանց համար փոխարինում են այն աղմուկներն ու յուզմունքները, որոնք կրում են ազամարդիկ այլ կռիւնների մէջ, որտեղ վճաւում են պատւոյ հարցերը կուսակցութեան, խմբի և գուցէ նոյնիսկ ամբողջ հայրենիքի:

VI

Վերջացնելով իմ վերլուծութիւնը սիրոյ մեղքերի, կարծում եմ, որ իմ ընթերցողներից մէկնումէկը կհանգնեցնի ինձ մի նկատողութեամբ, որ ես ցոյց եմ տալիս սիրոյ մեղքերի բոլոր աղբիւրները, միայն բացառութեամբ մէկի, ամենախոր աղբիւրի, որը զարուելով քարափնեքին ու ժայռերին հոսում է, իւր ջրերի հետ խառնելով վտակներ, գետակներ և ամբողջ հեղեղներ:

Ի՞նչ աղբիւր է այդ, որի մասին ես մոռացել եմ յիշել: Անկասկած, այդ, այսպէս ասած, հոգիների ձգողութիւնն է, որը միանգամից ոչնչացնում և օւերում է բոլոր նախկին գուգաւորութիւնները նորը ստեղծելու համար:

Միք վրդովի և սիրոյ սրբապղծութիւն միք համարի այս իմ համեմատութիւնը: Ենթադրւնք թէ ես ունիմ ջուր, այսինքն ջրածինի ամենամաքուր թթւուտ: Եթէ այդ ջուրը կանգնած է անօթի մէջ, մի այլ, ինչպիսի էլ որ լինի, մարմնի ազդեցութիւնից և հպաւորութիւնից զուրս, նա տարիներով ու դարերով կմնայ հանգիստ և անվրդով. բայց եթէ ես քցեմ անօթի մէջ մի կտոր կալաքար (попашъ) — անօթի մէջ գտնւած ջուրը կյուզի և կկիւի. թթւած ինք,

որը գուցէ դարերով մնար հաւատարիմ ընկեր
Նրածինի, զգում է զէպի կալաքարը ամենամեծ,
անյաղթելի ձգողութիւն:

Կալաքարը, այնպէս տսած, դուրս է քաշում
իւր նոր սէրը Նրածինի գրկից, միանում է
թթւածինի հետ և այդ միաւորութիւնից այն-
պիսի տաքութիւն է յառաջանում, որ այրում
է Նրածինը:

Տէնց այդպէս էլ՝ նոյնը կատարւում է հո-
գիների ձգողութեան հետ, որը միացնում է
տղամարդին և կնոջը: Այդ երկու՝ բացասական
և դրական տարերն են այն զուգաւորութեան,
որը կոչւում է սէր:


Քանի դեռ շի երեացել այն մարմինը, որը
երկու բազադրիչ մասերից մէկի համար աւելի
մեծ ձգողութիւն ունի, զանգւածը մնում է խա-
ղաղ և անփոփոխ. բայց Տէնց սր երևում է մեծ
ձգողութիւնը, այն ժամանակ զգացմունքների
աշխարհում կրկնւում է մեր պատմած երևոյթը:
Որքան թոյլ լինի երկու մարմիններն ու երկու
հոգիները կապող ձգողական ոյժը, այնքան հեշտ
է լուծելը այդ կրկնակի զանգւածի: Բայց երբ
ընդհակառակը, ձգողական ոյժը մեծ է—մար-
մինները բաժանելու համար պէտք է դիմել
արդէն աւելի բարդ քիմիայի և յաճախ մինչև
անգամ դա էլ չի հասցնում նպատակին և ըս-
տիպաւած էք լինում դո՛րձ դնել էլէքտրական
մարտկոցները:

Երբ տղամարդին ու կնոջը միացնող քիմի-
ական ձգողութիւնը շատ թոյլ է, ապա դաւա-
ճանութիւնը սովորաբար այստեղ արդէն աչքի
առաջ կայ թաքնւած, աններգործական դրու-
թեամբ, ինչպէս ընդունւած է ասել բնագի-
տութեան մէջ: Բայց թաքնւած դրութիւնը վե-
րափոխւում է գործնականի, այսինքն, յան-
ցանքի միայն այն ժամանակ, երբ կողմերի
հաւատարակչութիւնը խախտւում է մէկը այն
պատճառներից, որոնց հետազօտութեամբ մենք
գրապեցինք այս յօդւածում:

Վ Ե Ր Զ

Վ Ր Ի Պ Ա Ն Ե Ր

Երևու	Տ ո Ղ	Ս Ե Ս Լ	Ո Ի Ղ Ի Ղ
5	3 զ.	փսիսում է	փսիսում է.
7	13 զ.	անձի	անձի
9	14 զ.	համախմբել	համախմբել
16	3 ն.	խոզավաղնիքը	փոզերը:



if the the not be used
of the same

1847

1847	1848	1849
1000	1000	1000
1000	1000	1000
1000	1000	1000
1000	1000	1000

ՄԵՐ ԹԱՐԳՈՐԱՆՈՒԹԻՆՆԵՐԸ

1. Պ. Մանուկացյա—Հիանդ սէր (սոգառ.)
2. Նոյն—Սիրոյ մեղքերը հնոյա ծագումը 10 հ.

Պատարտտուն են տղազրութեան .

3. Գեոկիւրէ-ժրատութիւն, հոգեր-բժշ-Էսփոյ.
4. Փ. Վ. Բեյարուս. Թափասական բուրբար.
5. Նէկրա—Ներիր. վէտ.
6. Ժ-Կ-Գրո.—Նեղրի վրէժը. վերջին վէտիկ
7. Ա. Յսիպով.—Մի ամիս Գ.-Գորում.
8. Վ. Փօն Գալինց.—Գիւղական քահանայ. վէտ.
Երկու հասար.
9. Հայոց պատմութիւն. ժողովրդ. բնիկերցա-
նութեան համար.

Գրմեր՝ Александрополь, Священнику Ер-
ванду Налбандянъ

Типография О. Аппияна

Տպարանի Գեոարմենական և, Գուտեմբերգ
գրափաճառանոցները:

Գրմեր է 10. 1009.



19073

0025358

« Ազգային գրադարան »



NL0025358

